Հաստատում եմ՝

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի

Տնօրեն՝_____ Ի.Վարդանյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ

2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Հաշվետվությունը կազմված է Որակի ապահովման պատասխանատուի 2019-2024 թվականների երկարաժամկետ պլանի կարճաժամկետ գործողությունների 2019-2020 ուստարվա ժամանակահատվածի համար:

Զեկույցում ներկայացված է պլանով նախատեսված 7 չափանիշների համար նախատեսված կարճաժամկետ գործողությունները և համապատասխան հիմքերը:

Ներկայացնենք ըստ 7 չափանիշների կատարված աշխատանքները:

1.. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Մշակել Քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման ընթացակարգ

2018-2019 ուստարվանից Քոլեջում իրականացվող բարեփոխումների շրջանակում մշակվել և խորհրդատվական մարմինների կողմից հաստատվել է մի շարք ներքին նորմատիվ փաստաթղթեր: Հաշվի առնելով այն, որ քոլեջի գործունեության վրա էական ազդեցություն են թողնում արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները, Քոլեջի Տնօրենի հանձնարարությամբ գործող ուղեցույցի համապատասխան իրականացվել է Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն, որն ընդգրկել է 2016-2019թթ. ընկած ժամանակահատվածը:

Գործողության կատարողականի վերջնաժամկետ է նախատեսված՝ 2019-2020 ուստարի:

(Հիմքեր՝ «Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության համար կիրառվող գործիքներ և մեթոդներ» ուղեցույց, Քոլեջի գործունության SWOT վերլուծության զեկույց)

Գործողություն 2. Ներդնել ռիսկերի բացահայտման և կառավարման համակարգ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են Հայաստանյան միջին մասնագիտական կրթական համակարգում ռիսկերի առաջացման և կառավարման միջոցառումները: Կոնկրետ ուսումնասիրվել են վերջին երեք տարիների ՄՄՈՒՀ-ի ընդունելության վիճակագրական տվյալները, համաձայն ՀՀ Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) և Կրթական տեղեկատվական ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) հրապարակումների, որտեղ ըստ տարիների կտրուկ նվազել է դիմորդների ընդհանուր թիվը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության որոշումները, հրամանները և այլն: Արդյունքում մշակվել և շրջանառության մեջ է դրվել համապատասխան փաստաթուղթը: Գործողության վերջնաժամկետ էր սահմանվել 2021թ.

(Հիմք՝ «Ռիսկերի բացահայտման և կառավարման» ընթացակարգ)

Գործողություն 3. Վերանայել վարչարարության ՈԱ մեխանիզմները՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը:

Վերոհիշյալ գործողությունը պլանավորված էր 2020-2021 ուստարվա ընթացքում, սակայն հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ներդրվել է Քոլեջի բոլոր ստորաբաժանումների համար պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ: Կազմակերպվել են սեմինարներ և քննարկումներ ստորաբաժանումների աշխատակիցների համար պլանավորման և կատարողականի նոր ձևաչափերի վերաբերյալ: Բոլոր ստորաբաժանումները մշակել և հաստատմանն են ներկայացրել 2019-2024 թվականների երկարաժամկետ պլանները, որն իր մեջ ներառում է նաև կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների պլանավորում իրենց վերջնարդյուքներով: 2019-2020 ուստարվա իրենց կատարողական զեկույցները բոլոր ստորաբաժանումները ներկայացրել են արդեն իսկ նոր ձևաչափով:

(Հիմք՝ Նոր պլանի ձևանմուշ, Հաշվետվության ձևանմուշ)

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Վերանայել դասավանդման և ուսումնառության ընթացակարգերը:

Այս գործողությունը նախատեսված էր իրականացնել 2020-2021 ուստարվա ընթացքում: Տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի կողմից իրականացվել են համալիր միջոցառումներ, որի արդյունքում վերանայվել և մշակվել են ուսումնական գործընթացի բարելավմանն ուղված ներքին նորմատիվ փաստաթղթեր:

(Հիմք՝ Նոր փաստաթղթերի ցանկ)

Գործողություն 3. Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ պատասխանատուի կողմից վերանայվել, մշակվել և Տնօրինական խորհրդի հաստատմանն է ներկայացվել Քոլեջում «Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման» կանոնակարգը: Ներդրված նոր կանոնակարգով դասալսումները պլանավորվում է կազմակերպել 2020-2021 ուստարվանից:

(Հիմք՝ Նոր կանոնակարգ)

Գործողություն 4. Մշակել բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներ:

Ուսումնական մասի հետ համատեղ մշակվել և Տնօրինական խորհրդի կողմից հաստատվել է բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներին առնչվող փաստաթուղթ ***(Հիմք՝ Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ)***:

Քոլեջի ղեկավարության կողմից քայլեր են ձեռնարկվում ընդլայնել համագործակցության շրջանակը, հատկապես միջազգային ուսումնական հաստատությունների հետ: ՈԱ պատասխանատուի կողմից բանակցություններ են տարվում Բելառուսի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գործընկերների հետ:

Նախնական պայմանավորվածության համաձայն նախատեսված էր փոխադարձ այցելություններ, սակայն համավարակի պատճառով այն հետաձգվեց:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Ապահովել ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը Քոլեջի կառավարմանը:

Քոլեջի կառավարման գործընթացում ուսանողները ունեն իրենց կայուն տեղն ու դիրքը: Ուսանողները Քոլեջում գործող բոլոր խորհրդակցական մարմիններում և հանձնաժողովներում ակտիվ ներգրավված են, մասնակցել և մասնակցում են թե կառավարման և թե ուսումնական հարցերին վերաբերվող բոլոր քննարկումներին: Քոլեջում իրականացվում է ուսանողակենտրոն քաղաքականություն:

Գործողություն 2. Ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնական ծրագրերի մշտադիտարկման գործընթացում:

Այս գործողությունը պլանավորվում է իրականացնել 2020-2021 ուստարվա ընթացքում:

Գործողություն 3. Իրականացնել միջոցառումներ ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով:

Հաշվետու տարում Նոր կորոնավիրուսի համավարակի տարածումը ամբողջ աշխարհում լուրջ խնդիրներ առաջացրեց մեզ համար: Քոլեջի ուսումնական գործընթացը

ամբողջ երկրորդ կիսամյակում կազմակերպվեց առցանց, այդ իսկ պատճառով նախապես ուսանողական խորհրդի պլանավորված մկիջոցառումները չիրականացվեց:

Գործողություն 4. Ապահովել ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոլորտում:

Քոլեջում ուսանողների իրազեկվածության տրամադրումը իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կրում են պարտադիր և պարբերական բնույթ: Ամբիոնները, ուսումնական մասը պարբերաբար կազմակերպում են հանդիպումներ ինչպես անհատական, այնպես էլ խմբային: Բոլոր ուսանոնղերը համացանցում ունեն ձևավորված խմբեր և բոլոր խնդիրները քննարկվում են իրենց ավագների և դասախոսների հետ: Անհրաժեշտության դեպքում քննարկումը կարող են կազմակերպել՝ ուսումնական մասի վարիչի, ամբիոնի վարիչների կամ տնօրենի տեղակալի հետ:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Մշակել Քոլեջի ՈՆԱ քաղաքականություն:

Հաշվետու ժամանակահատվածում արտաքին փորձագետի և ՈԱ պատասխանատուի հետ համատեղ շարունակվել են իրականացվել է Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքները: Արդյունքում վերանայվել և վերանայվում են Քոլեջում գործող ներքին իրավանորմատիվային փաստաթղթերը, կազմակերպվում են քննարկումներ ներքին շահակիցների շրջանում: 2019-2020 ուստարվա ընթացքում մշակվել և ներդրվել է Քոլեջի ՈՆԱ քաղաքականությունը և ձեռնարկը: ՈՆԱ քաղաքակության և ձեռնարկի արդյունավետության գնահատումը պլանավորվում է իրականացնել 2021-2022 ուստարվա ընթացքում, որից հետո կներկայացվի շահակիցների կարծիքների վերլուծական զեկույց:

(Հիմք՝ Քոլեջի ՈՆԱ քաղաքականություն և ձեռնարկ):

Գորշողություն 2. Վերանայել ընթացակարգերը, կազմակերպել մշտադիտարկումներ:

Այս գործողությունը իրականացվել է գործողություն 1-ի հետ: Մշակվում են հարցաշարեր ՈՆԱ համակարգին առնչվող ընթացակարգերի և քաղաքականության արդյունավետության գնահատման ուղղությամբ:

Գործողություն 3. Մշակել ՈԱ ուղղված անհրաժեշտ ընթացակարգեր և դրանց գնահատման մեխանիզմներ:

Այս գործողությունը իրականացվել է գործողություն 1-ի հետ:

Մշակվում են հարցաշարեր ՈՆԱ համակարգին առնչվող ընթացակարգերի և քաղաքականության արդյունավետության գնահատման ուղղությամբ:

Գործողություն 4. Մշակել հետադարձ կապի առավել արդյունավետ մեխանիզմներ:

Այս գործողությունը իրականացվել է գործողություն 1-ի հետ:

Մշակվում է ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման քաղաքականությունը:

են հարցաշարեր ՈՆԱ համակարգին առնչվող ընթացակարգերի և քաղաքականության արդյունավետության գնահատման ուղղությամբ:

Գործողություն 6. Ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում:

Այս գործողությունը դեռ ընթացքի մեջ է, այն պլանավորվում է ամբողջական իրականացնել 2020-2021 ուստարվանից:

Որակի ապահովման պատասխանատու _____ Լ.Հարությունյան

30.11.2020թ.